ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ԴՏՊ-11414-11018/23 ԱՌՀԳ»

Քաղ. Երևան «1» փետրվարի 2023 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության, ի դեմս նախագահ Երվանդ Մխիթարյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1141.«Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «11018. Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1.-ին կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 20, 963, 536 (քսան միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի N 1 հավելվածում: Ծրագիրն իրականցվում է Գեղարքունիքի մարզում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ամսական 145 երեխայի համար (ամսական):

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ, եթե հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակում) պայմանագրում նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը չի կատարվել նվազագույնը 80 %-ով կամ չի ապահովվել շահառուների պլանային թվի նվազագույնը 75 %-ը՝ պայմանագրի 9.7.-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու միջոցով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել պայմանագրի 6.2.-րդ կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. պայմանագիրն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավելի, քան պայմանգրի N 6 հավելվածով սահմանված ֆինանսական նախահաշվի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, նախարարությանը ներկայացնել հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն պայմանագրի N 5 հավելվածի, և հաշվետվությունները՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի, ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություններ՝ մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդող ամսվա 10-ը, իսկ չորրորդ եռամսյակի համար՝ մինչև դեկտեմբերի 20-ը, և տարեկան հաշվետվություն՝ ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ համաձայն N 2 հավելվածի և N 7 հավելվածում նշված ձևաչափի.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը.

2.4.8. պայմանագրի 4.1-ին կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի փետրվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

2.4.9. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը (ըստ պահանջի)

3.1. Նախարարությունն ըստ պահանջի ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և (կամ) ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (N 5 հավելված) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2.-րդ կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1.-ին կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2.-րդ կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (N 4 հավելված) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2.-րդ և 6.3.-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Նախարարության կողմից պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է պայմանագիրը ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը (N 7 հավելված):

9.2. այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ https://www.mlsa.am/?cat=142 կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունն այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերն իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս

կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1.-ին կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Ք. Երևան, կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011030732 ՀՎՀՀ 01506515 Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն Ք. Երևան, 0026, Գ. Նժդեհ 42 ԷՅԶ - ԷՍ - ԲԻ - Սի բանկ Հայաստան Հ/Հ 217001061738005 ՀՎՀՀ՝ 02214646 Նախագահ՝ Երվանդ Մխիթարյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
2023 թվականի փետրվարի __-ին կնքված
«ԴՏՊ-1141-11018/23 ԱՌՀԳ» պայմանագրի

«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագրի

ԱՌԱՋԱՐԿԸ

Համառոտագիր

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) առաջարկում է ծրագիր, որի շրջանակում թվով 145 մասնագիտական աջակցության կարիք ունեցող և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված /ԿԴԻՀ/ 18 տարին չլրացած՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի և հարակից համայնքների անձանց կտրամադրվեն սոցիալ-հոգեբանական, կրթական, խորհրդատվական, վերականգնողական ծառայություններ:
Ծրագիրը ուղղված կլինի մինչև 18 տարեկան երեխաների՝ ընտանիքում ապրելուն և նրանց սոցիալական ներառմանը, երեխայի (ընտանիքի) կյանքի դժվարին իրավիճակի կանխարգմանը կամ հաղթահարմանը՝ գնահատված սոցիալական կարիքների հիման վրա համարժեք ծառայությունների տրամադրման միջոցով:
Ցերեկային խնամքի ծառայությունը կհիմնվի երեխայի լավագույն շահի, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1989 թվականի նոյեմբերի 20-ի 44/251 բանաձևով ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի վրա:
Ծրագիրը միտված է խթանելու երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և/ կամ նրանց սոցիալական մեկուսացումը՝ խթանելով ԿԴԻՀ երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, նպաստելու համայնքի մշակութային կյանքին վերջիններիս մասնակցությանը, ինչպես նաև աջակցելու հաստատություններում խնամք ստացող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորմանը:
Ծրագրի ընթացքում աջակցություն կստանան՝

- ✓ ԿԴԻՀ երեխաները և նրանց ընտանիքի անդամները,
- ✓ Հաստատություններից ընտանիքների հետ վերամիրավորված երեխաները և նրանց ընտանիքները, ովքեր անհատական սոցիալական ծրագրի մոնիթորինգի արդյունքների համաձայն կարիք ունեն ստանալ կենտրոնի տրամադրած ծառայությունները,
- ✓ Շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող երեխաները և նրանց ընտանիքի անդամները:

Կազմակերպության շահառուներին, ինչպես նաև մարզպետարանի, քաղաքապետարանի և Միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՄՍԾՏԿ) կողմից ուղղորդված անձանց:
Ծրագրային գործողությունների պլանավորումը, համակարգումը, վերահսկողությունը կիրականացվի Կազմակերպության կենտրոնական գրասենյակի կողմից:
Ծրագրով նախատեսվում է տրամադրել հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալ-հոգեբանական աջակցություն, այդ թվում՝ երեխայի ընտանիքի անդամներին
- սոցիալական, առողջապահական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատվություն/տեղեկատվական աջակցություն և ուղղորդում
- կրթական աջակցություն - ուսումնադաստիարակչական ծառայություններ, մասնագիտական կողմնորոշում, արվեստի միջոցով թերապիա, ժամանց, մշակութային միջոցառումներ
- վերականգնողական (լոգոպեդական և ֆիզիոթերապևտիկ ծառայություններ)

[1] http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf

- դասընթացներ երեխաների և նրանց ծողների համար

✓ Կենտրոնը կհամալրվի դիդակտիկ նյութերով, գրենական պիտույքներով և այլ անհրաժեշտ պարագաներով՝ տրամարվող ծառայություններն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

✓ Ծրագրում ընդգրկված երեխաներին կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում կտրամադրվի նաև սնունդ:

✓ Կենտրոնը բաց կլինի նաև շուրջօրյա խնամք ստացող երեխաների համար, ովքեր հնարավորություն կունենան օգտվել կենտրոնի տրամադրված ծառայություններից: Այս երեխաները կընդգրկվեն ծրագրում՝ նախօրոք գնահատված կարիքների և կազմված անհատական ծրագրերի հիմա վրա: Այս պարագայում սոցիալական աշխատանք կիրականացվի նաև երեխայի՝ շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպության հետ:

✓ Բազմամասնագիտական թիմի, ինչպես նաև կենտրոնի շահառուների կարողությունները շարունակաբար զարգացնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, կվարձվեն համապատասխան մասնագետներ / դասընթացավարներ՝ մեկանգամյա կամ բազմանգամյա մասնագիտական ծառայություններ տրամադրելու նպատակով:

Երեխաների խնամքի ցերեկային ծառայություններ մատուցող կենտրոնները գործելու են որպես ապահով միջավայր ԿԴԻՀ երեխաների, ներառյալ՝ 2020 թվականի Արցախյան պատերազմի և պարբերաբար սահմանային իրավիճակի սրացման հետևանքով տեղահանվածների համար, որտեղ նրանք հնարավորություն կունենան ստանալ սոցիալ-հոգեբանական աջակցություն՝ սոցիալ-հոգեբանական վերականգնմանը նպաստելու և հոգեկան առողջության ավելի ծանր խնդիրների զարգացումը կանխելու նպատակով: Յուրաքաչյուր երեխայի կարիք կգնահատվի բազմամասնագիտական թիմի կողմից և նրանց համար կկազմվի անհատական սոցիալական ծրագիր: Այն շահառուների համար, ովքեր, մի շարք պատճառներով պայմանավորված, ի վիճակի չեն լինի օգտվել կենտրոնների ծառայություններից, ծառայությունները կտրամադրվեն արտակենտրոն ձևաչափով՝ շարժական (մոբայլ) թիմերի միջոցով: Ինչպես կենտրոնում, այնպես էլ արտակենտրոն ծառայությունների մատուցումը կիրականացվի բազմամասնագիտական թիմի կողմից: Տրամադրվող ծառայությունների տեսակները և տրամադրման հաճախականությունը կորոշվեն ելնելով յուրաքանչյուր շահառուի փաստացի կարիքից, առողջական վիճակից և կենսագործունեության սահմանափակման աստիճանից, սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունից՝ ՄՄԾՏԿ-ների հետ սերտ համագործակցությամբ:

Կազմակերպությունը Ծրագրի շրջանակներում նախատեսված ծառայությունների տրամադրմանը զուգահեռ կիրականացնի ծրագրի վերաբերյալ իրազեկում թիրախ համայնքներում, ներառյալ՝ ԿԴԻՀ երեխաների համար հասանելի վայրերում (դպրոց, պոլիկլինիկա, համայնքապետարան, ՄՄԾՏԿ և այլ), գործընկեր կազմակերպություններում՝ շահառու խմբերի համար տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով: Հաշվի առնելով սոցիալական հարթակներում Կազմակերպության դիտելիության բարձր ցուցանիշը, մեծ լսարանը՝ Ծրագրի, վերջինիս արդյունքների մասին տեղեկատվությունը տարածելու համար համար կօգտագործվի նաև Կազմակերպության վեբ կայքը և ֆեյսբուքյան էջը: Կազմակերպությունը, օգտագործելով նաև իր գործընկերային կապերը, այլ ծրագրերի շրջանակներում կտարածի Ծրագրի մասին տեղեկատվություն, այլ ծրագրերում թիրախ խմբի հետ աշխատող մասնագետների կողմից կիրականացվեն համապատասխան ուղղորդումներ՝ ապահովելով Ծրագրի տեսանելիությունը նաև այդ ձևաչափով:

Ծառայությունները կտրամադրվեն երեխաների խնամքի ցերեկային կենտրոններում, ինչպես նաև արտակենտրոն ձևաչափով: Կենտրոնի ծրագրային անձնակազմը հետևյալն է՝ 2 խմբավար, սոցիալական աշխատող, հոգեբան, լոգոպեդ, ֆիզիկական թերապևտ, բուժքույր:

Ծրագրի նկարագրություն

2020 թ

վականին տեղի ունեցած պատերազմը, սահմանային իրավիճակի պարբերարար սրացումները, ինչպես նաև COVID-19-ի տարածումը մեծ ազդեցություն ունեցան երկրի տնտեսական աճի նվազման, ինչպես նաև աղքատության, գործազրկության մակարդակի բարձրացման վրա: 2021թ.-ին աղքատության մակարդակը գնահատվել է 26.5%:2 Զբաղվածության պետական գործակալության տվյալների համաձայն՝ 2021թ.-ի մայիսի 1-ի

---

[2] Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2021թթ.-ին, 2.1 ներածություն , armstat.am/file/article/poverty_2022_a_2..pdf , 10.12.2022, ժամը՝ 22:00

դրությամբ զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 90,4 հազար մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.0 %-ով:3

COVID-19-ի տարածման և պատերազմի պատճառով Արցախից բնակչության տեղահանման արդյունքում բնակչության ավելի խոցելի խմբերի՝ ԿԴԻՀ ընտանիքների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց մոտ ավելի դժվարացավ սոցիալ-հոգեբանական, կրթական, առողջապահական և իրավաբանական խնդիրների լուծման համար մի շարք ծառայությունների հասանելիությունը և վերջիններիս համար առաջնահերթ նշանակություն ձեռք բերեց նրանց հիմնարար իրավունքների իրացման և սոցիալական ներառումն ապահովելու նպատակով վերոնշյալ ծառայությունների հասանելիության ապահովումը:

ՀՀ Կառավարության Երեխայի իրավունքների պաշտպանության 2022 թվականի Տարեկան Ծրագրում4 ներկայացված է, որ «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ցերեկային խնամքի ծառայություն տրամադրող 5 պետական հաստատությունների կողմից ծառայություն է մատուցվում 2-18 տարեկան շուրջ 600 երեխայի: 2020 թվականից նախարարությունն ընդլայնել է ցերեկային ծառայությունների ծածկույթը՝ հանրապետության 20 խոշոր բնակավայրերում ծառայություններ պատվիրակելով հասարակական կազմակերպություններին: 2021 թվականի առաջին կիսամյակի դրությամբ պատվիրակված հասարակական կազմակերպությունների կողմից նշված ծառայությունը միջինում տրամադրվել է 3097 երեխայի»: Այս վիճակագրությունը ցույց է տալիս, որ աջակցության կարիք կա նաև այն համայնքների երեխաների համար, որտեղ ծառայությունը տեղակայված չէ:

2021 թ

վականի 9 ամիսների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ5 է ստացվել երեխաների իրավունքների վերաբերյալ 485 գրավոր և բանավոր դիմում-բողոք 753 անձից: Դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանը, երեխայի՝ ծնողի հետ շփվելու իրավունքի իրացմանը, երեխայի կրթության իրավունքի իրացման ապահովմանը և այլն: Ցանկացած իրավիճակում պետք է կարևորել է երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու, յուրաքանչյուր երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության կապակցությամբ ձեռնարկվող քայլերում անհատական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը:

Հարկ է նշել, որ մինչև վերջերս չկար համապետական մեխանիզմներ՝ հայտնաբերելու և հետևելու դպրոցից դուրս մնացած կամ դուրս մնալու վտանգի առջև կանգնած երեխաներին: Իսկ դպրոց չհաճախելու ամենատարածված ռիսկային գործոններն են՝ հաշմանդամությունը, ծայրահեղ աղքատությունը, երեխայի աշխատանքը, էթնիկական ծագումը և փախստականի կարգավիճակը: ՀՀ Կառավարության 11 փետրվարի 2021 թվականի N 154-Ն6 որոշմամբ սահմանվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը՝ որով կարգավորվում են պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտման և ուղղորդման (կրթության մեջ ներառման) հետ կապված իրավահարաբերությունները:

Վերոնշյալը փաստում է երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների գործունեության կենսական պահանջը, մասնավորապես երեխաների սոցիալ-հոգեբանական, կրթական, իրավաբանական կարիքների, ազատ ժամանցի արդյունավետ ապահովման տեսանկյունից:

Առաջարկվող Ծրագիրը հնարավորություն կտա կանխել կամ բացահայտել երեխաների անտեսման, նրանց նկատմամբ բռնության (հոգեբանական, տնտեսական, սեռական, ֆիզիկական), իրավունքների ոտնահարման, թրաֆիքինգի դեպքերը՝ յուրաքանչյուր դեպքում իրականացնելով համախատասխան մասնագիտական միջամտություն՝ բազմամասնագիտական թիմի կողմից: Յուրաքանչյուր գործողության հիմքում առանցքային նշանակություն կունենա երեխայի լավագույն շահի պաշտպանությունը:

Աշխատելով ոչ միայն երեխայի, այլ նաև նրա սոցիալական միջավայրը կազմող այլ դերակատարների հետ, մասնավորապես՝ ծնողների, հնարավոր կլինի երեխայի համար ստեղծել հնարավորինս ապահով միջավայր, ընտանիքում դրական փոխհարաբերություններ: Հիմնվելով անհատական զարգացման սոցիալական ծրագրի

---

[3] Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի իրավիճակը 2021թ. մայիսի 1-ի դրությամբ, https://employment.am/am/375/LinkPage.html, 10.12.2022, ժամը՝ 21:51:

[4] ՈՐՈՇՈՒՄ 30 սեպտեմբերի 2021 թվականի N 1622-Լ , 3րդ գլուխ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=156920

[5] Երեխաների իրավունքների հարցով Մարդու իրավունքների պաշտպանին 9 ամիսների ընթացքում բողոք ներկայացրած անձանց թիվը, https://children.ombuds.am/երեխաների-իրավունքների-հարցով-մարդո/ 11.12.2022, ժամը 10:44:

վրա՝ սոցիալական աշխատողը բազամասնագիտական թիմի հետ միասին համապատասխան մասնագիտական միջամտություն կիրականացնի՝ ուժեղացնելով ընտանիքին, հիմնվելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի ուժեղ կողմերի վրա, որը հնարավորություն կտա հաղթահարել այն դժվարին իրավիճակը, որում ընտանիքը հայտնվել է: Նշված բոլոր ծառայությունների նպատակն է երեխային և նրա ընտանիքին աջակցելը՝ ապահովելով երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը:

Փորձելով հնարավորինս արդյունավետ և հասցեական դարձնել տրամադրվող ծառայությունները՝ հիմնվելով գնահատված կարիքների վրա՝ կառանձնացվեն տարբեր խմբակներ, որոնք հնարավորություն կտան երեխաներին՝ իրենց հետաքրքրություններին համապատասխան, ինքնադրսևորվել: Բազմամասնագիտական թիմի կողմից կիրականացվեն նաև տարբեր դասընթացներ թե երեխաների և թե իրենց ծնողների համար, ինչպես օրինակ աշխատանքային իրավունքների, երեխաների իրավունքների մասին տեղեկացվածության բարձրացում, բռնության տեսակների տարբերակում, հույզերի, զայրույթի կառավարում, դրական ծնողավարում և այլն:

Երեխաների հետ աշխատանքում կարևոր տեղ կզբաղեցնի նաև հավասարը հավասարի սկզբունքով հասակակիցների հետ շփումը՝ բացառելով ցանկացած տեսակի խտրականության կիրառումը՝ ըստ ընտանեկան կարգավիճակի, հաշմանդամության՝ կիրառելով դերային խաղերի, ֆիլմերի դիտման մեթոդը:

Առաջարկվող ծրագրի իրականացումը առաջին հերթին ժամանակի պահանջ է, քանի որ ծրագիրը հնարավորություն կտա ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, անհրաժեշտության դեպքում նրանց ընտանիքի անդամներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելուն՝ այդպիսով նպաստելով վերջինների սոցիալական կենսամակարդակի բարձրացմանն ու ներառմանը:

Տրամադրվող սոցիալ-հոգեբանական, կրթական, վերականգնողական, արտթերապևտիկ, խորհրդատվական ծառայությունների, շահերի պաշտպանության տրամադրման միջոցով, ցերեկային կենտրոնում և ըստ անհրաժեշտության արտակենտրոն տրամադրվող խնամքի ծառայությունների միջոցով հնարավոր կլինի նպաստել շահառու խմբի (երեխաների սոցիալ-հոգեբանական, կյանքի հիմնական հմտությունների զարգացմանը, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալ-վերականգնողական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և/կամ նրանց սոցիալական մեկուսացումը, խթանելով ԿԴԻՀ երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, իրավունքների հնարավոր խախտման դեպքերի կանխումը, համայնքի մշակութային կյանքին վերջիններիս մասնակցությունը:

Հարկ է նշել, որ նման ծրագրի բացակայության դեպքում կավելանան ինստիտուցիոնալ հաստատություններում խնամք ստանալու համար դիմող անձանց թիվը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ԿԴԻՀ երեխաներին և նրանց ընտանիքներին ստանալ անհրաժեշտ ծառայությունները՝ հիմնվելով անհատական կարիքի գնահատման վրա՝ ուժեղացնելով ընտանիքի ներքին և արտաքին ռեսուրսները:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակը. Ապահովել ԿԴԻՀ մինչև 18 տարեկան ԿԴԻՀ երեխաների սոցիալական ներառումը՝ համարժեք ծառայությունների տրամադրման միջոցով:

Կազմակերպությունը նախատեսում է հասնել Ծրագրի նպատակին հետևյալ Խնդիրների իրականացմամբ.

ԽՆԴԻՐ 1. թվով 145 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների՝ սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում:

Արդյունք 1. Թվով 145 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներ՝ ստացել են սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Սոցիալական աշխատողի կողմից իրականացված կարիքի գնահատման հիման վրա կազմվել են շահառուների անհատական սոցիալական ծրագրեր, տրամադրվել են համարժեք սոցիալական ծառայություններ: Համալիր կարիքների հայտնաբերման դեպքում սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է դեպքի վարումներ: Հոգեբանական ծառայության շրջանակներում տրամադրվել են հոգեբանական խորհրդատվություն երեխայի/անհրաժեշտության դեպքում ծնողի/ հետ, իրականցվել են հոգեբանական անհատական և խմբային պարբերական հանդիպումներ՝ միտված հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, սթրեսակայության ձևավորմանը և/կամ պահպանմանը և այլն:

---

[6] ՀՀ Կառավարության 11 փետրվարի 2021 թվականի N 154-Ն ՈՐՈՇՈՒՄ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149923

ԽՆԴԻՐ 2. թվով 90 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական աջակցության տրամադրում և ուղղորդումներ:
Արդյունք 2. Թվով 90 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաները օգտվել են առողջապահական, սոցիալական, ինչպես նաև կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական աջակցությունից և ուղղորդման ծառայություններից, ինչի արդյունքում ապահովվել է վերջիններիս՝ անխոչընդոտ կրթություն ստանալու, առողջապահական հաստատություններից օգտվելու իրավունքը: Երեխաները և նրանց ընտանիքի անդամները ակտիվ ներգրավվել են որոշումների կայացման փուլում, ծառայությունները տրամադրվել են գնահատված անհատական կարիքի հիման վրա: Սոցիալական աշխատողի ուշադրության կիզակետում է եղել երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերի հայտնաբերումը, համապատասխան միջամտության իրականացումը և նրանց՝ կրթական համակարգում ընդգրկվածության ապահովումը, ինչպես նաև երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը՝ բոլոր հնարավոր դեպքերում:
ԽՆԴԻՐ 3. Թվով 30 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին վերականգնողական/տերապևտիկ ծառայությունների տրամադրում
Արդյունք 3. Թվով 30 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներ օգտվել են վերականգնողական ծառայություններից, ինչի արդյունքում արձանագրվել է զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների վիճակի բարելավում կամ ամբողջական վերականգնում:
ԽՆԴԻՐ 4. թվով 110 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ծնողներին կրթական աջակցության տրամադրում:
Արդյունք 4. Թվով 110 ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաների և նրանց ծնողների համար , ըստ կարիքի, իրականցվել են դասընթացներ մի շարք թեմաներով՝ կյանքի հմտությունների ուսուցանում, ներառյալ ժամանցային ծառայություններ, անձի զարգացման ծառայություններ՝ մասնագիտական կողմնորոշում, քաղաքացիական կրթություն, մեդիագրագիտություն, իրավունքների իրազեկում, ծնողավարման դասընթացներ և այլն:
Ծրագրի շահառուները օգտվել են կենտրոնում գործող տարբեր խմբակներից, ինչպես մասնագիտական կողմնորոշումը հեշտացնելու, արտթերապևտիկ ծառայություններ ստանալու, այնպես էլ ժամանցային և մշակութային միջոցառումների միջոցով համայնքային կյանքին ակտիվ ներգրավվածությունն ապահովելու նպատակով:

Երեխաներին՝ ցերեկային խնամքի կենտրոններում ծառայության տրամադրման արդյունքում Կազմակերպությունը կապահովի հետևյալ արդյունքային ցուցիչները.

- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների գնահատված կարիքներ,
- Անհատական սոցիալական ծրագրերով սահմանված և ամբողջությամբ իրականացված միջոցառումներ,
- Կազմակերպության կողմից՝ ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների առնվազն 90%-ի բավարարվածություն մատուցված ծառայություններից,
- Յուրաքանչյուր ամիս ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ և նրանց ընտանիքներ՝ նվազագույնը տվյալ լոտում նշված շահառուների թվով,
- Արտակենտրոն ծառայություններ ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների թիվ,
